ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ №9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

## 2024-2029թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ.....................................................................................................................................3

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ...........................................................................................................................6

1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1.1Հաստատության ուսումնական գործընթացի քանակական և որակական արդյունքներ.............................................................................................................8

1.2. Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների զարգացման կարիքները.............................................................................................................. 12

1.3 Հաստատության համագործակցությունը կրթության կառավարման մարմինների, համայնքի, շահառու կազմակերպությունների հետ.....................................................16

1.4 Հաստատության խորհրդակցական մարմինները..............................................................19

1.5 Հաստատության ֆիզիկական վիճակը և նյութատեխնիկական բազան...............................29

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

2.1 Ուսումնական գործընթացի քանակական և որակական արդյունքների բարելավում...32

2.2 Մանկավարժական աշխատողների զարգացման կարիքների բավարարում.......................36

2.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերությունների բարելավում.....................................................40

2.4 Ուսումնական հաստատության խորհրդի և խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում.......................................................................................................42

2.5Շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում..........................................................................................................46

3. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1Սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը...............49

3.2Աշխատակազմի կառավարման և մասնագիտական զարգացման համակարգի արդյունավետությունը...................................................................................................50

3.3Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը և մասնակցայնությունը.......................................................................................................51

3.4Դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը և կիրառությունը............................................................................................................52

3.5Մանկավարժական ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովումը..............................................................................................................53

3.6Բոլոր շահառուների համար դրական, ապահով մթնոլորտի ապահովվածությունը............53

ՎԵՐՋԱԲԱՆ.........................................................................................................55

# ՆԱԽԱԲԱՆ



Ուսուցիչը պետք է կարողանա մատաղ սանի սրտում բորբոքել սրբազան և ազնիվ, կրոնական և բարոյական զգացմունքներ և օգնի նրան՝ ունենալու ճիշտ հայացք շրջապատի մասին և ըստ հնարին, լրիվ գաղափար այն մասին, ինչ ինքը անում է:

Կրթությունն անհատի, հասարակության, պետության զարգացման և առաջընթացի կարևորագույն շարժիչ ուժն է: Այդպես եղել է դեռ անհիշելի ժամանակներից և շարունակվել մինչև մեր օրերը: Զարմանալիորեն բայց 19-րդ դարի մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի գաղափարներն այսօր էլ արդիական են, աբովյանական կրթության լույսը կարողացել է կոտրել ժամանակի պատնեշն ու այսօր էլ աղաղակում է, որ մատաղ սերունդը պետք է ունենա իրական, տեսանելի, առարկայական կրթություն, կրթություն, որը հասկանալի է, ընկալելի և կիրառելի:

Հետխորհրդային Հայաստանն ունեցավ մի շարք փորձեր՝ կրթական համակարգը բարելավելու և բարեփոխելու՝ ի դեմս Բարեփոխումների առաջին վարկային ծրագրի, Բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի, Կրթության բարելավում վարկային ծրագրի և մի շարք այլ ենթածրագրերի: Արդարության համար պետք է նկատենք, որ նշված բարեփոխումների ծրագրերն իրենց դրական ներգործությունը բերեցին համակարգում որոշակի առաջընթաց ունենալուն, սակայն մեր երկրում հանրակրթական համակարգի էական ու շոշափելի բարեփուխումներն, անշուշտ, տեղի են ունենում այսօր, հենց հիմա, և դրանց անմիջական մասնակիցն ու իրականացնողը նաև մենք ենք: Իսկ ո՞րն է այն անջրպետը, որ մեզ թույլ է տալիս սահմաններ գծել նախկին և ներկա բարեփոխումների միջև, առավել դրական հատկանիշներով բնութագրել մերօրյա բարեփոխումները: Թերևս արդեն իսկ ունեցած որակական ու քանակական բարձր ցուցանիշներն են, համավարակի և պատերզամի բացասական հետևանքների անցնցում հաղթահարումը, նոր կրթություն ունենալու նկատմամբ համընդհանուր խանդավառությունը: Չենք կարող հիմնավոր

կերպով ասել, որ անելիքներ չունենք, որ բոլոր մարտահրավերները չեզոքացված են, որ հանրակրթական համակարգն իդեալական վիճակում է, այդուհանդերձ, փաստ է, որ մեր երկրում հանրակրթական համակարգը դարձել է կայուն զարգացող ոլորտ: Այդ են վկայում մի շարք արմատական բարեփոխումներ, որոնք կարող են ուղղել հանրակրթության կռացած ու կորացած մեջքը՝ ի դեմս ուսումնական հաստատությունների տնօրենի թափուր տեղը համալրելու ընթացակարգերի համակարգային փոփոխության, ուսումնական հաստատությունների ֆինանսավորման նոր կարգի, հաստատությունում ֆինանսատնտեսական համակարգողի հաստիքի ներդրման և, վերջապես, հանրակրթության նոր չափորոշիչների ներդրման, որոնք վերաձևել են կրթական համակարգն արմատապես՝ դարձնելով առավել մասնակցային, չափելի, արդյունավետ:

Եվ այսպես, քաջ գիտակցելով ժամանակի կրթական միտումների արժեքը, պատկերացնելով նոր կրթության գաղափարական հենքը՝ կազմել ենք Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան N9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը: Մեր աչքի տակ ունենալով դպրոցի ներկայիս վիճակի ախտորոշումը՝ փորձել ենք սահմանել վերջինիս առողջացման ընթացքը՝ առաջադրելով մեր իրատեսական, չափելի, հասկանալի դեղատոմսը:

Հիմնվելով դպրոցում իրականացվող ներքին և արտաքին գնահատման չափանիշների վրա, ուսումնասիրելով մանկավարժական, աշակերտական և ծնողական խորհուրդների հետ իրականացված հանդիպումներին հնչաց դիտարկումներն ու առաջարկները, մշտադիտարկելով դպրոցի առաջնային կարիքները՝ կազմել ենք սույն զարգացման ծրագիրը: Ծրագիրը կազմվել է՝ հիմնվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22 սեպտեմբերի 2022 թ. N 35-Ն հրամանի վրա: Սույն ծրագիրը դպրոցում առաջիկա հինգ տարիներին վարվելիք քաղաքականության հիմքն է, որակյալ ու կրթական ներկայիս միտումներին համապատասխանող դպրոց ունենալու մեր ռազմավարությունը:

Զարգացման ծրագիրը մշակելիս հիմք ենք ընդունել հանրակրթական ոլորտի օրենսդրությունը, նորմատիվ իրավական ակտերը, ոլորտին վերաբերելի մի շարք միջազգային փաստաթղթեր: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջի մասը սահմանում է հանրակրթության մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությունը[1]: Հանրակրթության վերաբերյալ իրավական հիմքերը դիտարկենք ստորև՝

1. ՀՀ սահմանադրություն:
2. ՀՀ օրենքը «Կրթության մասին»:
3. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»:
4. ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»:
5. ՀՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»:
6. ՀՀ օրենքը «Լեզվի մասին»:
7. ՀՀ օրենքը «Կրթության պետական տեսչության մասին»:
8. ՀՀ օրենքը «Տարածքային կառավարման մասին»:
9. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»:

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 2.1:

# ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Խաչատուր Աբովյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1953թ.: 1999թ. դպրոցի շենքի տեղում կառուցվել է նոր շենք, իսկ 2003թ. դպրոցը վերանվանվել է՝ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ»:

---

- Հաստատության անվանումը՝ «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
- Հաստատության հասցեն՝ Հայաստան, Լոռու մարզ, Վանաձոր Զորավար Անդրանիկի փող., 71 շենք
- Հաստատության ինտերներտային կայքի հասցեն՝ https://vanadzor9.schoolsite.am/
- Հաստատության էլ. փոստի հասցեն՝ **vanadzor9dproc@mail.ru**
- Հաստատության պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 26.210.02084
- Գրանցման ամսաթիվ՝2003.01.22
- Հաստատության շինության բնութագիրը՝ ոչ տիպային
- Հաստատության հարկայնությունը՝ երկհարկանի
- Հաստատության տիպը՝ըստ իրականացվող հիմնական ծրագրերի՝հիմնական
- Հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝ տարրական/1-4/, հիմնական/5-9/
- Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը՝197
- Աշխատանքային շաբաթը հաստատությունում՝ հնգօրյա
- Աշխատանքային ռեժիմը՝ միահերթ
- Շինության ջրամատակարարումը՝ շուրջօրյա
- Շինության կոյուղացումը կենտրոնացված
- Ջեռուցման ձևը՝ լոկալ

---

«Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում առկա եթակառուցվածքների նկարագիրը

| Առաջին հարկ | | Երկրորդ հարկ | |
|---|---|---|---|
| Տարածքի անվանումը | Չափը՝ մ$^2$ | Տարածքի անվանումը | Չափը՝ մ$^2$ |
| Ռեսուրս կենտրոն | 22 | Ուսուցչանոց | 33,6 |
| Բուժկետ | 8 | Տնօրենի աշխատասենյակ | 33,6 |
| Դասասենյակ 1 | 33,6 | Ընդունարան | 8 |
| Դասասենյակ 2 | 33,6 | Լաբորատորիա | 22 |
| Դասասենյակ 3 | 33,6 | Գրադարան | 38 |
| Դասասենյակ 4 | 33,6 | Կերպարվեստի սենյակ | 22 |
| Դասասենյակ 5 | 33,6 | Արմաթ լաբորատորիա | 33,6 |
| Դասասենյակ 7 | 33,6 | Համակարգչային | 33,6 |
| Ճաշարան | 33,6 | Դասարան 6 | 33,6 |
| Խոհանոց | 33,6 | Դասարան 8 | 33,6 |
| Կաթսայատուն | 6 | Դասարան 9 | 33,6 |
| Սանհանգույց 1,2,3 | 35,9 միասին | ՆԶՊ-ի դասասենյակ | 22 |
| Հաշվապահի սենյակ | 12 | Զենքի պահեստ | 8 |
| Էլեկտրականության սենյակ/շիտ/ | 6 | Սանհանգույց | 12,6 |
| | | Սանհանգույց1,2/միասին/ | 12,6 |

*Աղյուսակ 1*

# 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 Հաստատության ուսումնական գործընթացի քանակական և որակական արդյունքներ

Հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացն իրականացվում է դաս-դասարանային համակարգով՝ առաջնահերթ համարելով համապատասխանել կրթական արդի զարգացումներին: Դպրոցն իրականացնում է ներկայիս բարեփոխումներով սահմանված միջոցառումներն ու գործողությունները, դասագործընթացը պլանավորվում և իրականացվում է չափորոշչահեն և կարողունակահեն կրթության տրամաբանությամբ՝ նպատակ ունենալով ձևավորել ու դաստիարակել ինքնուրույն, նախաձեռնող, նորարար, կարողունակ սովորողներ: Աներկբայորեն կարևորելով ոլորտում պետության կողմից վարվող քաղաքականությունը, բարեփոխումների հիմքում ընկած նոր կրթական գաղափարները՝ դպրոցը կոտրել է ավանդական կրթության՝ տարիներ ի վեր արմատացած կարծրատիպերն ու կարևորում է համընդհանուր նոր ընկալումների տեղայնացումը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների շրջանում:

Անշուշտ, այդ նպատակին լիարժեքորեն հասնելու համար դեռ բազմաթիվ անելիքներ կան, քանի որ ցանկացած նորություն, նորարարություն դժվարությամբ է ընդունվում, ի հայտ են գալիս բազմաթիվ ռիսկեր, խոչընդոտներ, սակայն կարևոր է նաև գիտակցելը, որ պետության կողմից ոլորտում իրականացվող քաղաքականությունը չի տրամադրում արտոնություններ, անթույլատրելի են թերացումներն ու չարդարացված բացթողումները: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ գործ ունենք մատաղ սերնդին կրթելու, դաստիարակելու հույժ կարևոր գործընթացի հետ, և առավելագույն ջանքերի ներդնումը, պաշտոնական պարտականությունների անվերապահ և արդյունավետ իրականացումը ոչ միայն օրենքով է պարտադիր, այլ նաև՝ խղճի, բարոյական նկարագրի չգրված օրենքներով:

Եվ այսպես, առաջիկա հինգ ուսումնական տարիներին դպրոցում ուսումնական գործընթացը որակապես առաջ մղելու, որակական ու քանակական բարձր ցուցանիշներ գրանցելու համար, կարծում ենք, որ կարևոր ու առանցքային է հետևյալ ռազմավարական ուղղությունների վրա մեծագույն ուշադրություն դարձնել.

**ՔԱՅԼ 1.** Դպրոցում սովորողների համար պետք է ապահովել այնպիսի միջավայր, որ վերջիններս գիտակցաբար մոտենան սեփական ուսումնառության գործընթացին: Սովորողը պետք է հասկանա, որ այսօրվա ամբարած գիտելիքն իր համար դառնալու է երաշխիք՝ ապագայում բարեկեցիկ և խոստումնալից կենսակերպ ունենալու համար, ուստի կարևոր ենք համարում բոլոր միջոցները ներդնել՝ սովորողների սովորելու մոտիվացիան բարձրացնելու, ուսումնական առողջ մրցակցային միջավայր ապահովելու համար:

**ՔԱՅԼ 2.** Դասագործընթացին որևէ սովորող չպետք է ստվերում մնա: Վերջինս պետք է ունենա չափելի և թույլատրելի ինքնավարություն՝ որոշելու իր կրթության ձևը, իր սովորելու եղանակը: Անթույլատրելի ենք համարում պարտադրել սովորողին անգիր անել ուսումնական նյութը, ֆրոնտալ հարցում իրականացնել՝ սովորողներին պարտադրելով պահել գրքային նյութի պարբերությունները: Նախատեսում ենք ունենալ սովորողակենտրոն, աջակցող, մասնակցային ուսումնական միջավայր: Պատկերացնենք դասագործընթաց, որտեղ սովորողները համագործակցում են, միջառարկայական, վերառարկայական կապեր գտնում, ինքնուրույն հետազոտություններ կատարում համացանցային աղբյուրներից, օժանդակ ուսումնական նյութերից, հնարավորություն ունեն անկաշկանդ կարծիք, դիրքորոշում հայտնելու, իրար գնահատելու, մեկմեկու սովորեցնելու, ստուգելու: Անշուշտ, հենց այս կերպ է ծնվում ուսումնական մոտիվացիան, հենց այս կերպ է հնարավոր ապահովել քանակական և որակական բարձր ցուցանիշներ:

**ՔԱՅԼ 3.** Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովելու համար մեզ հարկավոր են կարողունակ, համարձակ, ստեղծարար ուսուցիչներ, ովքեր չեն կառչում դասագրքերից, ովքեր չեն խուսափում կրթական նորարարություններից, ովքեր ինքնակրթվում են, դառնում առաջնորդներ, մոտիվացնողներ, ուղղորդողներ: Մեզ պետք են ուսուցիչներ, ովքեր կդառնան պատուհան կյանքը նոր ճանաչող սովորողների համար: Միայն այս կերպ է հնարավոր ունենալ երկարաժամկետ հաջողություններ:

Այսպիսով, կարծում ենք՝ ուսումնական գործընթացում քանակական և որակական բարձր ցուցանիշներ ունենալու համար հարկավոր է, որ կրթական գործընթացի բոլոր մասնակիցները սիրեն դպրոցը, գիտակցեն կրթության կարևոր նշանակությունը, չվախենան նորարարություններից, չձուլանան, չհոգնեն: Այս համատեքստում պարտադիր պայման է, որ ուսումնական հաստատության տնօրենությունը ևս ընդառաջ գնա ուսուցչին, սովորողին, բավարարի նրանց պահանջմունքները, ապահովի անհրաժեշտ միջոցներով, ուսումնանյութական բազայով, ստեղծի հրապուրիչ, գրավիչ, ներառական ու մասնակցային միջավայր, որպեսզի կրթությունը զարգանա, սովորողն առաջադիմի, ուսուցիչը մոտիվացվի:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Հաստատության ուսումնական պլանը մշակվել և գործածվում է՝ համաձայն չափորոշչային պահանջների:
- Հաստատությունում ուսումնական գործընթացը պլանավորվում և անցկացվում է՝ համապատասխան կրթական չափորոշիչների: Կիրառվում են գնահատման ժամանակակից ձևեր, ակտիվ, ինտերակտիվ, համագործակցային, պրոբլեմային մեթոդներ, անց են կացվում ուսումնական նախագծեր, օգտագործվում են ուսումնաօժանդակ նյութեր, դիդակտիկ պարագաներ, ՏՀՏ գործիքներ:
- Խստերեն վերահսկվում է, որ դասագործընթացին իրականացվեն դասի համար սահմանված բոլոր նպատակները և վերջնարդյունքները լինեն իրատեսական, չափելի:
- Մի շարք ուսուցիչներ անց են կացնում ոչ ֆորմալ դասեր, մշտապես ապահովում են միջառարկայական կապեր, գործընկերների հետ համատեղ անց են կացնում ինտեգրված դասեր, մրցույթներ, վիկտորինաներ:
- Ներդպրոցական վերահսկողությունն իրականացվում է բավարար չափով, սովորողներին տրվում են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, հայտորոշիչ, ստուգողական առաջադրանքներ՝ մնացորդային գիտելիքները պարզաբանելու նկատառումներից ելնելով:

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Որոշ ուսուցիչներ չեն տիրապետում նոր չափորոշիչներով աշխատելուն, ունեն նկատելի դժվարություններ, չեն կարողանում կիրառել գնահատման ժամանակակից ձևեր, ՏՀՏ գործիքներ, նախապատվություն են տալիս ուսուցման ավանդական մոդելին:
- Գործընկերների հետ համագործակցությանն ընդառաջ գնացող ուսուցիչների թիվը մեծ չէ, կան պասիվ, ձեռնպահ, անտարբեր ուսուցիչներ:
- Ուսումնանյութական բազային բացակայությունն ու անբավարարությունը խոչընդոտում է, որ որոշ առարկաների դասավանդումը լինի լիարժեք, հագեցած, դինամիկ:
- Մասնագիտական աճին միտված մի շարք միջոցառումներին, այդ թվում՝ կամավոր ատեստավորմանը մասնակցությանը, ուսուցչի որակավորման տարակարգին դիմելուն և մի շարք այլ միջոցառումներին ուսուցիչների ցածր հետաքրքրվածությունը խոցելի է դարձնում ուսումնական գործընթացի որակական և քանակական ցուցանիշների բարձրացումը:

## 1.2 Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների զարգացման կարիքները

**Տվյալներ ուսուցչական անձնակազմի և նրանց գործունեության վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար**




*Գծապատկեր 1.*

### *Մանկավարժական համակազմ*

| **Մանկավարժական աշխատողների թիվը** | **29** |
|---|---|
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը | 1 /2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակ/ |
| Պարտադիր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը | 8 /2022-2023 ուստարի/ |
| Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը | 1 / Մնացականյան Կարինե-մաթեմատիկայի ուսուցիչ, ստանում է հավելավճար/ |
| Վերապատրաստող ուսուցիչներ | 1 |
| Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 4 |
| Հոգեբան | 1 |
| Ջինդեկ | 1 |
| Գրադարանավար | 1 |

| | |
|---|---|
| Լաբորանտ | 1 |
| Ուսուցչի օգնական | 2 |

*Աղյուսակ 2*

Արդի կրթական բարեփոխումների շրջանակներում օրախնդիր է դարձել, որ բոլոր մանկավարժական աշխատողները տիրապետեն կրթական բարեփոխումների տրամաբանությանը, կատարեն դրանցից բխող մի շարք գործառույթներ, այդ թվում՝պլանավորեն և վարեն կարողունակահեն դասեր, կիրառեն գնահատման ժամանակակից ձևեր, կարողանան ապահովել բոլոր սովորողների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ կարիք ունեցողների կրթական կարիքները, դասը վարեն ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով: Այս ամենը ենթադրում է, որ պետք է գրեթե ամբողջապես վերանայվեն ուսուցիչների մեթոդական հմտությունները՝ դրանք համալրելով նոր ու ժամանակակից մանկավարժական մոտեցումներով: Նկատենք, որ այս ամենին ուղղված պետությունն իրկանացնում է համապարփակ գործողություններ՝ վերապատրաստումների, սեմինարների, մի շարք մրցույթների և այլ միջոցառումների տեսքով: Դպրոցում իրականացված մշտադիտարկումների, ԿԳՄՍ նախարարության կայքի, մի շարք մանկավարժական առցանց հարթակների ուսումնասիրության արդյուքում՝ հանգել ենք այն եզրակացությանը, որ պասիվ, ձեռնպահ, անտարբեր ուսուցիչներ նույնպես առկա են, ովքեր չեն գնում կրթական նորարարությունների հետևից, հավատարիմ են մնում ուսուցչակենտրոն կրթությանը, անիմաստ են համարում ինքնակրթությունն ու ինքնազարգացումը: Մեր խորին համոզմամբ՝ այսպիսի ուսուցիչները հարվածի տակ են դնում պետության անասելի ջանքերը, ուստի կարծում ենք, որ այս թիրախային խմբի հետ կարիք  կա մանրակրկիտ աշխատանք տանելու, վերջիններիս մոտիվացնելու, խրախուսելու: Առաջիկա հինգ տարիներին այս իրավիճակը չեզոքացնելու, ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքները բավարարելու նկատառումներից ելնելով՝ փորձենք առանձնացնել մեր կողմից առանձնացված մի քանի կարևոր ռազմավարական ուղղություններ.

**ՔԱՅԼ 1**. Հաճախ է պատահում այնպես, որ ուսուցչից պահանջվում է օրինակ՝ վարել դասեր՝ՏՀՏ-ի կիրառությամբ, սակայն դպրոցը չունի բավարար տեխնիկական

հազեցվածություն՝ ուսուցչին օժանդակելու համար: Սա մի պարզագույն օրինակ է, երբ տեղի է ունենում շահերի բախում, իսկ արդյունքում՝ տուժում է ուսումնական գործընթացը: Կարծում ենք, որ դպրոցում ամեն ինչ և ամեն ոք փոխկապակցված են, լրացնում ու շարունակում են միմյանց: Եվ որպեսզի ուսումնական գործընթացն արդյունավետ զարգանա, կարծում ենք՝ կարևոր է դպրոցն ապահովել ու զինել ուսումնական բոլոր միջոցներով, այդ թվում՝ տեխնիկական միջոցներ, ուսումնանյութական բազա, այլ միջոցներ: Նշված միջոցների դերը մեծ է ժամանակակից միտումներին համապատասխան ուսումնական միջավայր ունենալու համար, և դրանց բացակայությունը որևէ կերպ չի կարելի արդարացնել: Ավելին՝ դպրոցի ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման, արդաբյուջետային միջոցների ներգրավման, եղած ռեսուրսների վերահսկման միջոցով հնարավոր է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ լուծումներով համալրել դպրոցի կարիքները՝ նպաստավոր պայմաններ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար:

**ՔԱՅԼ 2.** Ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների պարագայում կարևոր հանգամանք է մոտիվացիան: Չկա սովորելու, ինքնակրթվելու, առաջ նայելու մոտիվացիա, չկա որակյալ կրթություն: Սա անհերքելի և արդեն իսկ ապացուցված փաստ է: Կարևոր ենք համարում ուսումնական հաստատության վարչական աշխատողների, այդ թվում՝ տնօրենի, տօրենի տեղակալների կողմից ուսուցիչներին տրամադրվող մասնագիտական աջակցության, խորհրդատվության դերը: Ուսուցիչը չպետք է մենակ չմնա իր դժվարությունների հետ: Բոլոր գործիքակազմերն ու լիազորություններն օգտագործելով՝ ուսումնական հաստատությունը պետք է կանգնի ուսուցչի կողքին, մղի նրան դեպի մասնագիտական զարգացում, տանի իրազեկողական աշխատանքներ, խրախուսի և արժևորի ուսուցչի ձեռքբերումները, պայմաններ ապահովի բարեվարք ու մասնակցային համագործակցության ապահովման համար: Երբ բոլորը գիտեն օրենքով սահմանված իրենց իրավունքներն ու պարտավորությունները, երբ այդ իրավունքները պաշտպանված են, իսկ պարտավորությունների չկատարմանը տրվում է օրենքի սահմաններում համապատասխան արձագանք, նշանակում է, որ

բոլորն իրապես իրենց տեղերում են, չկա խորտակվող նավ. կրթության նավը նավարկում է խախաղ ջրերում:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Հաստատության մանկավարժների հիմնական մասը բավականին ակտիվ համագործակցում է միմյանց, գործընկեր դպրոցների ուսուցիչների, համացանցային առցանց հարթակներում գործընկերների հետ: Այս համատեքստում տեղի է ունենում օրինակելի փորձի փոխանակում, իրականացվում են համատեղ միջոցառումներ:
- Հաստատության մանկավարժների հիմնական մասն ունի մասնագիտական բարձր հմտություններ, կիրառում է առցանց կրթական գործիքներ, տիրապետում է կրթական նորարարական տեխնոլոգիաներին, գնահատման ձևերին, դասը վարում է՝ համապատասխան նոր չափորոշիչների պահանջների:
- Բոլոր ուսուցիչները մասնակցում են պարտադիր վերապատրաստումներին:

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Հաստատության որոշ ուսուցիչներ դժվարություններ ունեն՝ կրթական նորարարությունները դասագործընթացում տեղայնացնելու առումով:
- Կան պասիվ, չհամագործակցող, կարծրատիպային մտածելակերպով, մասնագիտական աճին ընդառաջ չգնացող ուսուցիչներ:
- Կամավոր ատեստավորմանը, ուսուցչի որակավորման տարակարգին և այլ մասնագիտական աճին միտված միջոցառումներին ուսուցիչների մասնակցության մակարդակը էապես նվազ է, հետաքրքրության մակարդակը՝ ցածր:
- Որոշ ուսուցիչներ հակված են նախապատվություն տալ ուսուցման ավանդական մոդելին, դասը վարում են ուսուցչակենտրոն մեթոդներով, սովորողների ակտիվությունը, մասնակցային միջավայրը դասագործընթացին չի ապահովվում:

### 1.3.Հաստատության համագործակցությունը կրթության կառավարման մարմինների, համայնքի, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, ԿԳՄՍ նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը (լիազորված մարմին), կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը /այսուհետև համակարգող[2]:




*Գծապատկեր 2. Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարումը:*

Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը հաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում և ուսումնական հաստատության կանոնադրության մեջ: Համաձայն կարգի՝ հաստատության տնօրենը միացիալ

[2] Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին ՀՀ Կառավարության՝ 2023 փետրվարի 16 N 216-Ն որոշում:

կոլեգիալ կառավարման մարմնի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով: Կառավարման խորհրդի լիազորությունները դիտարկենք ստորև`

- Կառավարման խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում` աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:
- Կառավարման խորհուրդը քննարկում է զարգացման ծրագրի, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները:
- Իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է նախագահ:
- Դպրոցի կառավարման խորհուրդը իր լիազորությունների շրջանակում իրականացնում է դպրոցի ընթացիկ գործունեության վերահսկումը, քննարկում դպրոցի առաջիկա անելիքները, տալիս հավանություն, վերահսկողություն է իրականացնում դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ, քննարկում ֆինանսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:
- Կառավարման խորհուրդը իր գործունեությամբ նպաստում է դպրոցի բնականոն զարգացմանը և այլն[3]:

Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան N9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-կառավարման խորհուրդն ունի 9 անդամ:

| Անուն, ազգանուն | Ում կողմից է առաջադրված | Աշխ. Վայրը |
|---|---|---|
| Ղևոնդյան Գոհար | ԿԳՄՍ | Լոռու մարզպետարան |
| Ավետիսյան Կարեն | Մարզպետարան | Լոռու մարզպետարան |
| Կոստանյան Էրիկ | Մարզպետարան | Լոռու մարզպետարան |
| Հարվիհաննիսյան Ասքանազ | Մարզպետարան | ԲԷՑ /ՓԲԸ/ |
| Գրիգորյան Վահե | Համայնքապետարան | Վանաձորի համայնքապետարան |

[3] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի ո 113-ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15 մարտի 2021 թ. N 25-Ն հրաման:

| | | |
|---|---|---|
| Մովսիսյան Արփինե | Մանկ. Խորհուրդ | Վանաձորի թիվ 9 դպրոց |
| Առաքելյան լուսինե | Մանկ. Խորհուրդ | Վանաձորի թիվ 9 դպրոց |
| Պետրոսյան Արմինե | Ծնող. Խորհուրդ | Թումանյան /ՍՊԸ/ |
| Բորջյան Քրիստինե | Ծնող. Խորհուրդ | - |

*Աղյուսակ 3. Կառավարման խորհրդի անդամների կազմը*

Խորհրդի անդամները հիմնականում համագործակցող են, նախաձեռնող, մտահոգ դպրոցի զարգացմամբ և առաջընթացով: Դպրոցը բաց և թափանցիկ քաղաքականություն է վարում, խորհրդին տրամադրում է անհրաժեշտ հաշվետվությունները, այլ փաստաթղթեր:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը սերտորեն համագործակցում է նաև կառավարման մյուս մարմիններ հետ՝ ի դեմս ԿԳՄՍՆ-ի, Լոռու մարզպետարանի կրթության վարչության: Բոլոր շրջաբերականներին, հանձնարարականներին տրվում է լիարժեք և համակողմանի արձագանք: Դպրոցը սահմանված կարգով հաշվետու է բոլոր կառավարման օղակներին:

Դպրոցը համագործակցում է նաև մի շարք շահառու կազմակերպությունների հետ, որոնցից են՝ ԿՏԱԿ, ԳԹԿ, ՏՄԱԿ, ԿՋՆԱԿ, ԱԻՆ, ՀՀ Ոստիկանություն, Համայնքային գրադարան, Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատ, մի շարք վերապատրաստող կազմակերպություններ և այլն:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ունի համագործակցային սերտ հարաբերություններ նաև ՏԻՄ-ի հետ: Առկա է համագործակցություն համայնքի հետ, որը, սակայն, կարիք ունի ընդլայնման և բարելավման: Համայնքի հետ համատեղ անցկացվում են մշակութային, սպորտային, սոցիալական նշանակության միջոցառումներ, սակայն դրանց թիվը նկատելիորեն քիչ է:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Հաստատությունը սահմանված կարգով համագործակցում է կառավարման մարմինների հետ՝ կատարելով իր բոլոր պարտավորությունները:

- ԿԳՄՍՆ-ի, Պետական կառավարման լիազոր մարմնի հետ ուսումնական հաստատությունը մշտական և շարունակական կապի մեջ է, առկա է երկուստեք արդյունավետ համագործակցություն:
- Մեծ թվով շահառու կազմակերպությունների հետ դպրոցն ունի գործընկերային և համագործակցային հարաբերություններ:
- Կառավարման խորհուրդը ձևավորվել և գործունեություն է ծավալում՝ կատարելով օրենքով սահմանված իր բոլոր լիազորությունները:
- Դպրոցն ունի համագործակցային հարաբերություններ ՏԻՄ-ի, համայնքի հետ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Հաստատության մանկավարժական աշխատողները պասիվ մասնակցություն ունեն նախարարության կողմից իրականացվող միջոցառումներին:
- Շահառու կազմակերպությունների հետ առկա համագործակցությունը կարիք ունի խորացման՝ պայմանավորված համատեղ միջոցառումների, հանդիպումների ու նախագծերի ցածր թվաքանակով:
- Ուսուցիչները պասիվ են շահառու կազմակերպությունների հետ համատեղ նախագծեր իրականացնելու հարցում:
- Կառավարման խորհրդում կան քիչ թվով պասիվ ու ձեռնպահ անդամներ, կարիք կա մասնագիտական քննարկումների, իրազեկողական միջոցառումների հաճախակի անցկացման:
- Համայնքի հետ կապը թույլ է, կարիք կա տարաբնույթ նախագծերի թվաքանակի մեծացման, համայնքի անդամների շրջանում իրազեկող բնույթի աշխատանքների անցկացման:

## 1.4.Հաստատության խորհուրդն ու խորհրդակցական մարմինները

«Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների

խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»[4]:




***Գծապատկեր 3. Հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինները:***

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առարկայական մասնախմբերը

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ձևավորվող առարկայական մասնախմբերը նպատակ ունեն համակարգել և կանոնակարգել մեթոդական աշխատանքները դպրոցում: Առարկայական մեթոդական միավորումները մոտ կամ հարակից առարկաներից կազմված առարկայական մասնախմբեր են, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են ուսումնական գործընթացի որակական և քանակական ցուցանիշների բարձրացմանը, օժանդակում մանկավարժական աշխատողներին, կանոնակարկում մեթոդական և ուսումնական աշխատանքները դպրոցում: Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[5]: Միևնույն ժամանակ՝ առարկայական մասնախմբերի աշխատանքների կենտրոնում

---

[4] ՀՀ Կառավարության 15 հուլիսի 2010 թվականի N 954-Ն որոշումը՝ ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-Ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

[5] «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 95:

մանկավարժական աշխատողների միջև առողջ համագործակցության ապահովումն է, օրինակելի փորձի փոխանակումն ու մեթոդական աջակցության տրամադրումը սկսնակ և դժվարություններ ունեցող ուսուցիչներին: Մեթոդմիավորումների աշխատանքները կազմակերպվում են մեթոդմիավորման նախագահի տարեկան աշխատանքային պլանով, որը ուսումնական տարվա սկզբին հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և գործածության մեջ է դրվում հաստատության տնօրենի հերթական հրամանով: Հաստատությունում կիսամյակային պարբերականությամբ կատարվում է մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների հաշվետվողականություն:

«Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սահմանված կարգով ձևավորվել և գործում են թվով 3 մեթոդական միավորումներ.

1. ***<u>ԲՏՃՄ առարկաների մեթոդական միավորում</u>***
2. ***<u>Տարրական առարկաների մեթոդական միավորում</u>***
3. ***<u>Հումանիտար առարկաների մեթոդական միավորում</u>***

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը

Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով[6]: Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է[7]:

«Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդն ունի 30 անդամ: Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի լիազորությունները դիտարկենք ստորև.

[6] «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76:

[7] «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81:

- քննարկում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը,
- քննարկում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի դիմումի համաձայն,
- քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ,
- քննարկում է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության արտադասարանական որակի, նրանց աշխատանքների կազմակերպման, խմբակների, երկարօրյա խմբերի ստեղծման հարցերը և այլն:




*Գծապատկեր 4. Մանկավարժական համակազմի տարիքային բաշխվածությունը 2023-2024 ուստարվա տվյալներով*

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտական խորհուրդը

Ներկայումս հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջնային պարտավորություններից է հնարավորություններ ստեղծել, որպեսզի դպրոցում անխոչընդոտ ձևավորվի յուրաքանչյուր սովորողի անհատականութունը, վերջինս ձեռք բերի քաղաքացիական, սոցիալական պատասխանատվություն, ունենա ինքնավարություն, ակադեմիական ու խոսքի ազատություն: Մեր երկրում հանրակրթական համակարգը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության,

կրթության զարգացման շարունակականության, խտրականության բացառման և բոլոր երեխաների կրթության իրավունքի անխոչընդոտ իրացման վրա: Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ[8]: Այս համատեքստում կարևոր է, որ ուսումնական հաստատությունն օժանդակի աշակերտական խորհրդի ձևավորմանն ու արդյունավետ գործունեությանը: Աշխորհուրդը ուսումնական հաստատությունում աշակերտների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որը մասնակցում է ներդպրոցական կյանքին, ուսումնական հաստատության կառավարմանը: Դպրոցի աշակերտական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով: Աշխորհուրդը հանդիսանում է աշակերտների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին, որի ձևավորման հիմքում ժողովրդավարությունն է, մարդասիրությունը, փոխօգնությունը, նախաձեռնությունն ու ստեղծարարությունը: Աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) հրավիրվում է՝

1) տարեկան առնվազն երկու անգամ աշակերտական խորհրդի նախագահի կողմից.

2) արտահերթ ժողով կարող է հրավիրվել՝ աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով.

3) հանրակրթական դպրոցի տնօրենի նախաձեռնությամբ:

Աշակերտները կարող են ստեղծել նաև ըստ հետաքրքրությունների ակումբներ, միավորումներ, որոնք հանդիսանում են աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ[9]:

«Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սահմանված կարգով ձևավորվել և գործում է աշխորհուրդ: Խորհուրդը հիմնականում մասնակցում է ներդպրոցական կյանքին, համագործակցում համայնքի և շահառու

---

[8] Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 20:

[9] ՀՀ Կառավարության 15 հուլիսի 2010 թվականի N 954-Ն որոշումը՝ ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-Ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

կազմակերպությունների հետ, իր լիազորության սահմաններում մասնակցություն է ցուցաբերում հաստատության կառավարմանը:

| | |
|---|---|
| Ընդհանուր թիվը | **183** |
| Աղջիկ | 88 |
| Տղա | 95 |

*Աղյուսակ 4. Տեղեկատվություն սովորողների թվի վերաբերյալ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի դրությամբ*




*Գծապատկեր 5.*




2021-2022 - ծանր -2, միջին-10

*Գծապատկեր 6.*

2022-2023 - ծանր -2, միջին- 15

2023-2024 - ծանր -4, միջին-6

### ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհուրդը

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների ցանկը

1) սովորողը.

2) սովորողի ծնողը.

3) ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ.

4) վարչական աշխատողները.

5) խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք:

Ծնողները և դպրոցը հավասարաչափ պատասխանատվություն են կրում սովորողի կրթության ու դաստիարակության համար: Հենց այս համատեքստում է, որ կարևոր է նշված երկու սուբյեկտների կառուցողական ու շարունակական համագործակցության ապահովումը: Ուսումնական գործընթացին, դպրոցի

կառավարմանը ծնողների ակտիվ ներգրավվածությունը իր նպաստն է բերում սովորողների ուսումնական առաջադիմությանը, կարգապահությանը, արժեքային համակարգի ձևավորմանը, այլ խոսքով՝ դպրոց-ընտանիք սերտ համագործակցությունը դպրոցի կայուն զարգացման երաշխիքներից է: Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով[10]:

Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սահմանված կարգով ձևավորվել և գործում է ծնողական խորհուրդ, որը կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է[11]: Դպրոցում ծնողխորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով: Հրավիրվում են դասարանական և համադպրոցական ժողովներ, որոնց շրջանակներում օրակարգային հարցերից զատ, ծնողները ևս հանդես են գալիս իրենց մտահոգություններով, դիտարկումներով, առաջարկություններով: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից: Ընդհանուր առմամբ՝ խորհուրդը բավականին ակտիվ է գործում, սակայն կան նաև պասիվ ծնողներ, ովքեր ընդառաջ չեն գնում դպրոցի, ուսուցչի, դասղեկի հետ համագործակցության շարունակական ապահովմանը:

### Հոգաբարձուների խորհուրդ

Ուսումնական հաստատության համար շատ կարևոր է հոգաբարձուների խորհրդի առկայությունը, որն իր աջակցությունն է տրամադրում մի շարք խնդիրների և կազմակերպչական հարցերի լուծմանը: Հոգաբարձուների խորհրդի գործունեության նպատակն է օժանդակ միջոցներով ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատներից, դպրոցի շրջանավարտներից և

[10] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28:

[11] ՀՀ Կառավարության 15 հուլիսի 2010 թվականի N 954-Ն որոշումը՝ ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-Ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

կամավոր ֆինանսավորողներից: Դիտարկենք հոգաբարձուների խորհրդի լիազորությունները ստորև.

- օժանդակում է հանրակրթական դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը,
- նպաստում է հանրակրթական դպրոցի կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հանրակրթական դպրոցի կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը,
- աջակցում է սոցիալական ծրագրերի իրականացմանն ու սովորողների ամառային հանգստի կազմակերպմանը,
- լսում է իր հատկացրած միջոցների նպատակային ծախսման վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը,
- մասնակցում է հանրակրթական դպրոցի զարգացման ծրագրերի քննարկմանը և այլն:

Նկատենք, որ ուսումնական հաստատությունում չի կազմավորվել և չի գործում հոգաբարձուների խորհուրդ, ինչը մեզ համար դիտարկվում է ռազմավարական ուղղություն և սույն զարգացման ծրագրի գերակա նպատակներից: Խորհրդի հիմնումը մեզ համար գերակա շահ է՝ նպատակաուղղված դպրոցի կառավարման արդյունավետության խթանմանը:

Այսպիսով, բազմակարծությունը, կարծիքի ազատ արտահայտումը, մասնակցային միջավայրի բարձր մակարդակի ապահովումը յուրաքանչյուր ոլորտի համար կարևոր գրավական է՝ որակ ապահովելու համատեքստում: Այդպես է նաև հանրակրթական համակարգում: Շատ կարևոր է, որ դպրոցի կառավարումը դրված լինի ժողովրդավարության սկզբունքների վրա, կրթական համակարգի մասնակիցներն ունենան բարձր իրավագիտակցություն, ինչը թույլ կտա, որ թե' ուսուցիչները[12], թե' սովորողները[13] իմանան իրենց պարտականություններն ու իրավունքները: Բազմակարծության և մասնակցային միջավայրի ապահովումը թույլ կտա առավել մեծացնել խորհրդակցական մարմինների դերն ու կարևորությունը, լսել

[12] «Հանրակրթության մասին օրենք» հոդված 27:
[13] «Հանրակրթության մասին օրենք» հոդված 20:

նրանց առաջարկները, դիտարկումները: Սա նաև հզոր խթան է համընդհանուր մոտիվացիայի և առողջ մրցակցության մակարդակի բարձրացման համար:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Մեթոդական միավորման, մանկավարժական խորհրդի, ծնողխորհրդի և աշխորհրդի նիստերն իրականացվում են՝ համաձայն սահմանված կանոնակարգի և արձանագրվում են:
- Մեթոդական միավորումների աշխատանքներին ակտիվորեն մասնակցություն է ցուցաբերում մանկավարժական աշխատողների հիմնական մասը: Ձևավորված է համագործակցային մշակույթ, փոխօգնության միջավայր:
- Մանկավարժական խորհրդի որոշումների իրականացումը հետևողական կերպով վերահսկվում է տնօրենության կողմից, նիստերի օրակարգում սահմանվում և քննարկվում են ուսումնական գործընթացի բարելավմանն ու դպրոցի կառավարման արդյունավետության խթանմանն ուղղված հարցեր:
- Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնվում և իրականացվում են տարբեր ուղղվածության և նպատակների միջոցառումներ, այդ թվում՝ իրազեկողական, ճանաչողական քննարկումներ, ակցիաներ, միջոցառումներ, շաբաթօրյակներ: Խորհուրդը տարբեր շահառու խմբերի հետ ունի համագործակցության եզրեր:
- Աշակերտական խորհուրդը մշտապես աշխատանքներ է տանում դպրոցում հանդուրժողական, ներառական, մասնակցային միջավայր ապահովելու համար:
- Ծնողական խորհուրդը մասնակցում է ներդպրոցական կյանքին և հաստատության կառավարմանը:
- Ծնողների հիմնական մասը ներգրավված է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, համագործակցում է հաստատության մանկավարժական աշխատողների հետ:
- Ծնողների հիմնական մասն ունի բարձր պատասխանատվություն, իրավագիտակից է, հետևողական, աչալուրջ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Հաստատության մանկավարժական աշխատողների որոշ մասը պասիվ մասնակցություն ունի մեթոդմիավորման աշխատանքներին, հանդես չի գալիս առաջարկություններով, դժվարությամբ է ընդառաջ գնում գործընկերների հետ համագործակցությանը:
- Մանկավարժական համակազմի որոշ անդամներ ունեն անտարբեր ու ձեռնպահ վերաբերմունք մանկավարժական խորհրդի աշխատանքների նկատմամբ, քննարկումների ժամանակ պասիվ են:
- Դպրոցում փոքր թիվ են կազմում նախաձեռնող և նորարար ուսուցիչները:
- Մանկավարժական համակազմի որոշ անդամներ դժվարանում են կամ չեն ցանկանում մասնակցել քննարկումներին, առկա է բազմակարծության և մասնակցային միջավայրի անհամաչափություն:
- Կան պասիվ, չհամագործակցող, սոցիալական հմտություններ չունեցող սովորողներ:
- Աշակերտական խորհրդի անդամներից քչերն ունեն վերլուծական, քննադատողական մտածողություն, նախաձռնությունների պակասը նկատելի է:
- Ծնողների շրջանում կան ծնողավարական ցածր հմտություններով, պատասխանատվության ցածր մակարդակով, անտարբեր ծնողներ:
- Ծնողական խորհրդի աշխատանքը գոհացուցիչ չի կարելի համարել, առկա է կազմակերպչական հմտությունների և համախմբվածության պակաս:
- Դպրոցում չեն գործում հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ:

## 1.5.Հաստատության ֆիզիկական վիճակը և նյութատեխնիկական բազան

Ժամանակակից դպրոց ասելով՝ հասկանում ենք ոչ միայն կրթության բովանդակության ու կազմակերպական բարեփոխումներ, այլ նաև՝ ուսումնական հաստատության բարվոք շենքային պայմաններ, ենթակառուցվածքներով հագեցած, տրամադրող ուսումնական միջավայր, տեխնիկական միջոցներով, ուսումնանյութական բազայով զինված դպրոց: Մեր երկրում տասնամյակներ շարունակ այս հիմնախնդրի լուծումը եղել է բավականին խոցելի, դպրոցները «գոյատնել են» խորհրդային դպրոցի մնացորդներով, կիրառվել են անհրապույր,

հնամաշ ուսումնական նյութեր: Այս պայմաններում, անշուշտ, դժվար է եղել կազմակերպել լիարժեք ուսումնական գործընթաց: Առդուամենայնիվ, ներկայումս բարեկարգ, ֆիզիկական բարվոք, անվտանգ պայմանների ապահովումը, ուսումնանյութական բազայով հագեցած դպրոցներ կառուցելու անհասանելի թվացող տեսլականը քիչ-քիչ դարձել է համապետական նպատակ, իսկ բազմաթիվ դեպքերում՝ այլևս իրականություն:

Ամբողջապես կիսում ենք պետության կողմից ոլորտում իրականացվող քաղաքականության տրամաբանությունը, դպրոցաշինությունը, դպրոցների բարեկարգումը մեզ համար ևս օրակարգային հիմնահարց է, որակյալ ու մրցունակ կրթական համակարգ ունենալու գրավական:

Թեև ի համեմատ բազմաթիվ դպրոցների ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքը կառուցվել է շուրջ 2 տասնամյակ առաջ, սակայն նկատենք, որ ժամանակն այստեղ էլ արել է իր գործը, ընթացիկ բարենորոգման աշխատանքները և կոսմետիկ վերանորոգումները եղել են կարճաժամկետ լուծումներ, սակայն խնդիրներն այդպիսով չեն լուծվել, ընդհակառակը՝ կուտակվել են, շատացել: Դպրոցի ներկայիս շենքային պայմանները, ուսումնանյութական հագեցվածությունը բնավ էլ չի արտացոլում նարեկայիս կրթական բարեփոխումների տրամաբանությունը, բազմաթիվ բացեր, անհամապատասխանություններ, անբավարար միջոցներ ուղղակիորեն ազդում են կրթական հարմարավետ, ներառական և ապահով միջավայր ունենալուն: Այսքանով հանդերձ, նկատենք, որ հաստատության ֆիզիկական վիճակի բարելավումը, դպրոցը անհրաժեշտ տեխնիկական և ուսումնանյութական միջոցներով համալրումը մեզ համար առաջնային, անհետաձգելի և հրատապ լուծում պահանջող ռազմավարական նշանակության ուղղություն է: Կարևորում ենք հարմարավետ, աչքահաճո, անվտանգ, ուսումնական ռեսուրսներով հագեցած դպրոց ունենալու նպատակի՝ օր առաջ իրագործումը:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Դպրոցի շենքը մասնակի վերանորոգված է, շենքի շահագործումը համապատասխանում է սահմանված անվտանգության չափանիշներին:

- Ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:
- Դասասենյակները լուսավոր են, մաքուր, խստորեն պահպանվում են սանիտարահիգենիկ կանոնները, բոլոր սենյակներն օդափոխվում են:
- Շենքն ունի պահուստային ելքեր:
- Դպրոցին հարող տարածքը, բակը մաքուր է:
- Շենքային պայմանները հարմարեցված են ԿԱՊԿՈՒ սովորողների համար, առկա են թեքահարթակներ, լայն դռներ:
- Դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն:
- Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, ունի մշտական հոսող ջուր:
- Ուսումնական հաստատությունում առկա է ճաշարան:
- Դպրոցն ունի վերանորոգված և կահավորված ռեսուրս սենյակ:
- Հաստատությունն ունի գրադարան:
- 2 սանհանգույցները վերանորոգված են:

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Հաստատության շենքը տիպային չէ, հարմարեցված, ինչն առաջացնում է ենթակառուցվածքների տեղաբաշխման որոշակի դժվարություններ:
- Հաստատության պատուհանները ենթակա են փոփոխման:
- Ուսումնական հաստատության գույքը, այդ թվում՝ աշակերտական սեղանները, աթոռները, գրատախտակները հնամաշ է:
- Հաստատության դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը մասնակի է համապատասխանում առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:
- Հաստատությունը չունի մարզադահլիճ:
- Մարզագույքը հնամաշ է:
- Գրադարանն ֆոնդը կարիք ունի թարմացման, համալրման:

- Նյութատեխնիկական բազան հիմնականում հնամաշ է, կարիք կա ձեռք բերելու դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ, լաբորատոր նյութեր և սարքեր, այլ միջոցներ:
- Թվով 4 սանհանգույցներ կարիք ունեն վերանորոգման:
- Ուսումնական հաստատությունը հարակից տարածքը ցանկապատված չէ:
- Դպրոցի լաբորատորիան ունի վերանորոգման, գույքով և անհրաժեշտ միջոցներով համալրման կարիք:
- Հաստատությունը չունի առարկայական կաբինետներ:
- Հաստատությունը չունի հանդիսությունների դահլիճ:
-

# 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

## 2.1 Ուսումնական գործընթացի քանակական և որակական արդյունքների բարելավում

| N | Խնդիրներ | Գործողություններ | Անհրաժեշտ միջոցներ | Ժամկետ | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Դպրոցում իրականացվող թեմատիկ և ֆրոնտալ վերահսկողության արդյունավետության բարձրացում** | Սահմանված ժամանակամիջոցում իրականացնել վերահսկողություն հետևյալ ուղղություններով՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներ, արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանքներ, մեթոդական փորձարարական աշխատանքներ | Դասալսումներ, հարցազրույցներ, խորհրդակցություն, արձանագրություններ հաշվետվություններ, դասղեկի, ուսուցչի տարեկան աշխատանքային պլաններ, օրվա դասի պլանավորումներ | 2024-2029թթ. | Մանկավարժների ոչ բարեխիղճ աշխատանք, պաշտոնային պարտականութ-յունների չկատարում, թերակատարում, մասնագիտական ցածր որակների առկայություն, վերահսկողական մեխանիզմներին չտիրապետուման տարբերություն ՆԴՎ-ի նկատմամբ | Բարձրացնել մանկավարժակա ն աշխատողների մասնագիտական որակները՝ հաճախակի կազմակերպելով քննարկումներ, թեմատիկ զրույցներ, սեմինարներ, օժանդակել վերջիններիս մասնագիտական աճին միտված ծրագրերի և միջոցառումների մասնակցելիս |
